Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների
խորհրդի կողմից 25.06.2025 թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ
ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Կայուն զարգացման քաղաքականություն

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») ձգտում է սահմանել հանքաարդյունաբերության ոլորտում պատասխանատու և կայուն գործունեության չափանիշներ: Մենք պարտավորվում ենք ոչ միայն ընդունել, այլ նաև ներդնել նորարարական կայուն մեթոդներ, որոնք օգուտ են բերում թե՛ Ընկերության գործունեությանը և թե՛ ազդակիր համայնքներին՝ ապահովելով դրական փոփոխությունների և զարգացման կայունություն: Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերը, քաղաքացիական հասարակությունն ու կապալառու կազմակերպություններն իրավունք ունեն ակնկալելու, որ Ընկերությունն իր գործունեությունը կիրականացնի կայուն կերպով՝ ի շահ բոլոր կողմերի:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ապահովում է կայուն զարգացում համապատասխան տեսլական ունեցող ղեկավարության միջոցով, որն ակտիվորեն զարգացնում է դրական և էական փոխգործակցություն շահագրգիռ կողմերի հետ՝ ներդնելով կայուն զարգացման մշակույթ՝ Ընկերության գործունեության բոլոր ուղղություններով:

- ապահովում է մեր և մեր գործընկերների գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային ստանդարտներին և ուղեցույցներին, ներառյալ՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի սկզբունքներին, Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) գործունեության ստանդարտներին, Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) սկզբունքներին և Պոչամբարների կառավարման համաշխարհային ստանդարտին:

- սահմանում է աշխատանքի անվտանգության պաշտպանության նպատակային ուղեցույց՝ ակտիվորեն ստեղծելով այնպիսի միջավայր, որտեղ աշխատողների, կապալառուների և այցելուների բարեկեցությունը առաջնահերթություն է:

- պահպանում է մարդու իրավունքների նկատմամբ հաստատակամ հանձնառություն բոլոր այն մարդկանց համար, ովքեր ենթարկվում են ազդեցության Ընկերության գործունեության հետևանքով՝ երաշխավորելով, որ արժանապատվությունը, հարգանքը և արդար վերաբերմունքը հիմնարար են մեր կորպորատիվ էթիկայի համար:

- առաջատար է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում՝ առավելագույնի հասցնելով էներգիայի, ջրի և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և սահմանելով կայուն զարգացման նոր չափանիշներ ռեսուրսների կառավարման ոլորտում:

- բարեխղճորեն իրականացնում է Ընկերության գործունեությունը՝ միաժամանակ դրսևորելով բացարձակ անհանդուրժողական վերաբերմունք կոռուպցիայի նկատմամբ և նույնը պահանջում է մեր գործընկերներից:

- ապահովում է դրական և երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ազդեցություն տեղական համայնքների վրա:

- ստեղծում է բնապահպանական, սոցիալական և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգեր՝ երաշխավորելով Ընկերության ունակությունը բիզնեսի ռիսկերը բացահայտելու, արդյունավետ կերպով դրանք կառավարելու և հնարավորությունները օպտիմալացնելու ուղղությամբ:

- հանձն է առնում կայուն զարգացման կառավարման՝ Ընկերության մեթոդների շարունակական կատարելագործումը՝ ապահովելով օգտակար հանածոների պատասխանատու արդյունահանման սկզբունքների ներդրումը կազմակերպության յուրաքանչյուր որոշման և գործողության մեջ:

- տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսներ սույն Քաղաքականության իրականացման համար:
- իրականացնում է Ընկերության կայուն զարգացման ցուցանիշների մոնիտորինգ և թափանցիկ ու պրոակտիվ կերպով համագործակցում բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ մեր գործունեության բոլոր ուղղություններով:
- ընդունում է միջազգայնորեն ճանաչված հաշվետվողականության ստանդարտներ՝ Ընկերության կայուն զարգացման ուղին ներկայացնելու համար՝ ազնվորեն և բարեխղճորեն արտացոլելով մեր ձեռքբերումները և զարգացման ուղղությունները:
- պարբերաբար վերանայում և թարմացնում է կայուն զարգացման նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողականի տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:
- աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականությունը, բացահայտում բարելավման ուղղություններ և խթանում դրական փոփոխություններ:

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան